

Արձանագրություն
Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017թ. հունիսի 9-ի թիվ 4 նիստի

Օրակարգում ներառված էր 3 հարց.

1. Առկա ուսուցման համակարգի ասպիրանտների աստեստավորում:
2. Ամբիոնների վարիչների ներկայացումը ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և բովանդակային խնդիրների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

1. Առաջին հարցի վերաբերյալ ելույթ ունեցան ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրին ամբիոններում առկա ուսուցման ասպիրանտների հաշվետվությունների արդյունքները, նշելով, որ ընդհանուր առմամբ, բոլոր ասպիրանտներն աշխատել են իրենց թեկնածուական ատենախոսությունների նյութերի գրառման, շարադրանքի ուղղությամբ, մասնակցել են կրթական գործընթացի պայմաններով նախատեսված համապատասխան դասընթացների, պրակտիկաների: Շատ ասպիրանտներ մասնակցել են նաև հանրապետական ու միջազգային գիտական նստաշրջանների:

Ըստ ամբիոնների և ասպիրանտների պատկերը հետևյալն է.

1.1 Լսեցին – Մշակութաբանության ամբիոնի առկա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ Գարիկ Հրահատի Աթանեսյանի ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Հ. Լ. Պետրոսյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվետու ժամանակում ասպիրանտը ուսումնասիրել է թեմայի վերաբերյալ սկզբնաղբյուրներն ու գրականությունը, մասնակցել է հանրապետական ու միջազգային գիտական նստաշրջանների, դաշտային հետազոտական աշխատանքներ է կատարել Երևան քաղաքում, հրատարակել է երկու գիտական հոդված: Հաշվի առնելով կատարված աշխատանքը, ինչպես նաև գիտական ղեկավարի դրական կարծիքը, առաջարկեցին ատեստավորել Գ. Հ. Աթանեսյանին:

Որոշեցին`

1. Ատեստավորել Մշակութաբանության ամբիոնի առկա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ Գարիկ Հրահատի Աթանեսյանին:

1.2 Լսեցին – Մփյուռքագիտության ամբիոնի առկա ուսուցման երրորդ տարվա ասպիրանտ Վարդան Մակիչյանի ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Մփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., դոց. Ա. Ս. Եղիազարյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվետու ժամանակում ասպիրանտը հանձնել է մասնագիտական քննությունները, ատենախոսությունը փորձաքննության է հանձնել Հայոց պատմության և Մփյուռքագիտության ամբիոններում, որը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Հաշվի առնելով կատարված աշխատանքը, ինչպես նաև գիտական ղեկավարի դրական կարծիքը, առաջարկեցին ատեստավորել Վ. Մակիչյանին:

Որոշեցին`

1. Ատեստավորել Մփյուռքագիտության ամբիոնի առկա ուսուցման երրորդ տարվա ասպիրանտ Վարդան Մակիչյանին:

1.3 Լսեցին – Հայոց պատմության ամբիոնի առկա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ Նժդեհ Արտաշեսի Հովսեփյանի ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ. գ. դ., պրոֆ. Ա. Ե. Մովսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվետու ժամանակում ասպիրանտը հանձնել է ստուգարքներ` ուսումնական պլանով նախատեսված դասընթացներից, հրատարակել է երեք գիտական հոդված, գիտական ուսումնասիրություններ է կատարել Հայաստանի ազգային արխիվում և ազգային գրադարանում: Հաշվի առնելով կատարված աշխատանքը, ինչպես նաև գիտական ղեկավարի դրական կարծիքը, առաջարկեցին ատեստավորել Ն. Ա. Հովսեփյանին:

Որոշեցին`

1. Ատեստավորել Հայոց պատմության ամբիոնի առկա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ Նժդեհ Արտաշեսի Հովսեփյանին:

1.4 Լսեցին – Հայոց պատմության ամբիոնի առկա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ Հարություն Արմենակի Հայրապետյանի ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ. գ. դ., պրոֆ. Ա. Ե. Մովսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվետու ժամանակում ասպիրանտը հանձնել է ստուգարքներ` ուսումնական պլանով նախատեսված դասընթացներից, հրատարակել է երկու գիտական հոդված, գիտական ուսումնասիրություններ է կատարել Հայաստանի ազգային արխիվում և ազգային գրադարանում, ինչպես նաև Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Հաշվի առնելով կատարված աշխատանքը, ինչպես նաև գիտական ղեկավարի դրական կարծիքը, առաջարկեցին ատեստավորել Հ. Ա. Հայրապետյանին:

Որոշեցին՝

1. Ատեստավորել Հայոց պատմության ամբիոնի առկա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ չարություն Արմենակի Հայրապետյանին:

1.5 Լսեցին – Հայոց պատմության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Գևորգ Էդուարդի Կեսոյանի ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի ղեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ. գ. դ., պրոֆ. Ա. Ե. Մովսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվետու ժամանակում ասպիրանտը հանձնել է ստուգաքններ՝ ուսումնական պլանով նախատեսված դասընթացներից, հրատարակության է հանձնել երեք գիտական հոդված, գիտական ուսումնասիրություններ է կատարել Հայաստանի ազգային արխիվում և ազգային գրադարանում: Հաշվի առնելով կատարված աշխատանքը, ինչպես նաև գիտական ղեկավարի դրական կարծիքը, առաջարկեցին ատեստավորել Գ. Է. Կեսոյանին:

Որոշեցին՝

1. Ատեստավորել Հայոց պատմության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Գևորգ Էդուարդի Կեսոյանին:

1.6 Լսեցին – Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Արամ Պողոսյանի ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի ղեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Հ. Գ. Մարգարյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվետու ժամանակում ասպիրանտը ուսումնասիրել է թեմայի վերաբերյալ սկզբնաղբյուրներն ու գրականությունը: Հաշվի առնելով կատարված աշխատանքը, ինչպես նաև գիտական ղեկավարի դրական կարծիքը, առաջարկեցին ատեստավորել Ա. Պողոսյանին:

Որոշեցին՝

1. Ատեստավորել Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Արամ Պողոսյանին:

1.7 Լսեցին – Հայոց պատմության ամբիոնի առկա ուսուցման երրորդ տարվա ասպիրանտ Լիանա Լևոնի Մամյանի ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի ղեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ. գ. դ., պրոֆ. Ա. Ե. Մովսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվետու ժամանակում ասպիրանտը հրատարակության է հանձնել մեկ հոդված, շարունակել է նյութեր հավաքել ատենախոսության թեմայի վերաբերյալ: Առաջարկեցին հաշվի առնելով կատարված աշխատանքը, ինչպես նաև գիտական ղեկավարի դրական կարծիքը, առաջարկեցին ատեստավորել Լ. Լ. Մամյանին:

Որոշեցին՝

1. Ատեստավորել Հայոց պատմության ամբիոնի առկա ուսուցման երրորդ տարվա ասպիրանտ Լիանա Լևոնի Մամյանին:

1.8 Լսեցին – Սփյուռքագիտության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Մելիք Մկրտչյանի ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., դոց. Ա. Ս. Եղիազարյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվետու ժամանակում ասպիրանտը հանձնել է մասնագիտական քննությունները, հրատարակության է հանձնել մեկ հոդված: Առաջարկեցին հաշվի առնելով կատարված աշխատանքը, ինչպես նաև գիտական ղեկավարի դրական կարծիքը, առաջարկեցին ատեստավորել Մ. Մկրտչյանին:

Որոշեցին՝

1. Ատեստավորել Սփյուռքագիտության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Մելիք Մկրտչյանին:

2. Երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեցին դեկանի տեղակալ Վ. Հակոբյանը և ամբիոնների վարիչները: Վ. Հակոբյանը ևս մեկ անգամ ուշադրություն հրավիրեց աշխատանքների կատարման ժամանակացույցին հետևելու խնդրի վրա, առաջարկելով առաջնորդվելով հաստատված ծամանակացույցով: Ամբիոնների վարիչները զեկուցեցին ամբիոններում աշխատանքների կատարման ընթացքի, ուսանողների հետ հարաբերությունների պարբերականության, ինչպես նաև առկա խնդիրների մասին: Նշեցին, որ շարունակում է հիմնախնդիր մնալ լեզուների իմացությունը: Շատ ուսանողներ և բակավարիատում և մագիստրատուրայում շարունակում են սահմանափակվել հիմնականում հայերեն գրականությամբ, ինչը, բնականաբար, ազդում է աշխատանքների որակի և բովանդակության վրա:

3. Լսեցին ամբիոնների կողմից ներկայացված տարբեր զեկուցագրերը.

3.1 Լսեցին – Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոց., պ. գ. թ. Հովհաննես Ալեքսանյանի համար ՀՀ ԿԳՆ Բարձրագույն Որակավորման Հանձնաժողովից Է.00.01 “Հայոց պատմություն” մասնագիտության գծով թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու թույլտվություն ստանալու հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ պ. գ. դ., պրոֆ. Հ. Գ. Մարգարյանը: Հ. Գ. Մարգարյանը նշեց, որ Հ. Ալեքսանյանը ամբիոնում դասավանդում է արդեն մի քանի տարի, վարում ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասնագիտական դասընթացներ: Հեղինակ է բազմաթիվ հոդվածների, մենագրությունների, մասնակցել է միջազգային ու հանրապետական գիտաժողովների: Հաշվի առնելով Հ. Ալեքսանյանի մասնագիտական ակտիվ գործունեությունը, հրատարակված հոդվածների ու մենագրությունների բավականին մեծ թիվը, ամբիոնը

նպատակահարմար է գտել դիմել գիտական խորհրդին՝ Հ. Ալեքսանյանի համար թույլտվություն ստանալու խնդրանքով:

Որոշեցին՝

1. Դիմել ՀՀ ԿԳՆ Բարձրագույն Որակավորման Հանձնաժողովին՝ պ. գ. թ., դոց. Հ. Ալեքսանյանին համար Է.00.01 “Հայոց պատմություն” մասնագիտության գծով թեկնածուական ատենախոսություններ դեկավարելու թույլտվություն ստանալու նպատակով:

3.2 **Լսեցին** – Հայոց պատմության ամբիոնի դասախոս Սերգեյ Հակոբի Ամիրյանի “Արխիվագիտություն” դասագիրք-ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա. Ե. Մովսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ դասագիրքը համապատասխանում է նման դասագրքերին ներկայացվող պահանջներին և կարևոր նշանակություն ունի ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Որոշեցին՝

1. Հայոց պատմության ամբիոնի դասախոս Սերգեյ Հակոբի Ամիրյանի “Արխիվագիտություն” դասագիրք-ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ
պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյան

Խորհրդի գիտական քարտուղար
պ. գ. թ., դոց. Մ. Ռ. Գաբրիելյան